մի աւելորդ է ասել թէ ո՛րպիսի տեսակ տեսակ բանջարեղինօք և երփներանգ ծաղկօք ու մարգագետիններով պճնուած է, զտեսողս կը դիւթէ։

Յունիս ամսուն մտիր դաշտս, պիտի տեսնես բնութեան հրաշալիքը ինչ հիանալի գոյներով շքեղազարդած է շուրջդ. այս Ջրաբաշխի մեծ շնորհն է, որ սփռած է քայլերուդ տակ և քաղցր բուրմունքով զքեզ կարբեցնէ։

Մայիս ամսոյ առատ անձրևներու հրաշալի շնորհն թողած՝ Ջրաբաշխի աղբիւրներու հրաշալիքներու վրայ կը խօսիմ.—շարունակէ ճանապարհդ, դեռ մարդահասակ խոտի և ծաղկանց միջէն չանցած քեզ պատահեցաւ ճահճային վայր մի, ջրուած արտ մի, լճացող ջուր մի, գետակի մի աւազան, այդ միջոցին պիտի ստիպուիս կանգ առնել, վայրկեաններով պիտի շեղիս, վեր, վայր պիտի շրջիս, հուն մի, անցք մի, կամուրջ մի պիտի որոնես, երբեմն 1/2 ժամ յետ դառնաս։

ԳԵՏԵՐ

Բագրեւանդ Ջրաշատ երկիր մի լինելուն ամէն մարդ կարող է գուշակել որ ունենալու էր իւր գետն և գետակներն։[1]

Բագրեւանդայ դիրքն յարեւելից և յարեւմտից բարձր լինելուն, երկու կողմն ևս բազմաթիւ գետակներ լինելով և որք գետ կազմելով հանդէպ միմեանց կը հոսին,

---

1. Գետակներն գարնան կը յորդին, երկար միջոց հուն չեն ունենար, ժողովրդեան յարաբերութիւնը կը դադարեցնեն. սոքա ժողովրդեան մէջ գետ կը յորջորջուին.